ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ՝ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

30.12.2023 16:18

ՀՀ փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի փախստականների հարցերով

գերագույն հանձնակատարի գրասենյակի հայաստանյան ներկայացուցչության համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում հանրային պաշտպանների համար կազմակերպվել է արտագնա վերապատրաստման աշխատաժողով:

Դասընթացն այս անգամ իրականացվել է քրեաիրավական ոլորտի մասնագիտացում ունեցող հանրային պաշտպանների համար:

Աշխատաժողովի մեկնարկին ելույթով հանդես են եկել Հ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը՝ շնորհակալություն հայտնելով ՄԱԿ ՓՀԳ-ին արդյունավետ համագործակցության համար:

Բանախոսությամբ հանդես են եկել նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արսեն Նիկողոսյանը, Հանրային պաշտպանի գրասենյակում ապաստան հայցողների գործերով իրավական փորձագետ-խորհրդատու Տաթևիկ Շալջյանը:

Ի թիվս այլնի, քննարկվել են ապաստանի և դրան առնչվող վարույթներում իրավունքների պաշտպանության առանցքային հարցեր: Այս անգամ ևս աշխատաժողովի աշխատանքներին ներգրավվել է փորձագետ-հոգեբան Մարիամ Մելքումյանը, որն անդրադարձել է շահառուների հետ հաղորդակցության հմտություններին և բարդություններին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })